

# ՀԱՒԱՏՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

1 Յուլիսի, 1846

Կոստանդնուպոլիս, Թուրքիա

(Յապաուած)

1. Կը հաւատամ կենդանի ու նշմարիտ մէկ Աստուծոյ որ է ստեղծիչը, պահպանիչը, եւ կառավարիչը տիեզերքի:
2. Կը հաւատամ որ միակ Աստուածը գոյ է երբեակ անձնաւորութիւնով – Հայր, Որդի, եւ Սուրբ Հոգի:
3. Կը հաւատամ որ Հին եւ Նոր Կտակարաններու բովանդակած գիրքերը գրուած են Աստուծոյ ներշնչումով, եւ անոր կամքին յայտնութիւնն են մարդոց՝ ըլլալով միակ ու բաւարար կանոնը հաւատքի ու գործի:
4. Կը հաւատամ որ մարդկութիւնը՝ իր բնական վիճակին մէջ՝ զուրկ է սրբութենէ, ու մեղքի զօրութեան ենթակայ ըլլալով՝ արժանի է Աստուծոյ բարկութեան:
5. Կը հաւատամ որ Տէր Յիսուս Քրիստոս է միակ Փրկիչը մեղաւորներու, եւ թէ անիկա՝ իր կատարեալ հնազանդութիւնով, չարչարանքներով եւ մահով՝ ամբողջական քաղութիւն եղաւ մարդոց, նաեւ միակ պատարագը անոնց մեղքերուն համար, որով՝ ամէն անոնք որ կը հաւատան Անոր՝ կը փրկուին նշմարտապէս:
6. Կը հաւատամ որ մարդ արարածը ամբողջապէս վարակուած է մեղքէ, ու հետեւաբար, բոլոր մարդոց համար անհրաժեշտ է վերածնիլ Սուրբ Հոգիին զօրութիւնով՝ որպէսզի փրկուին:
7. Կը հաւատամ որ մենք կրնանք արդարանալ միայն Քրիստոսի վրայ ունեցած մեր հաւատքով, եւ ոչ թէ մեր անհատական գործերով: Թէեւ բարի գործերը անբաժան եւ նշմարիտ ու կենդանի հաւատքէն, անոնք կարող չեն՝ Աստուծոյ առջեւ՝ արժանիքի հիմնկատուիլ մեր փրկութեան:
8. Կը հաւատամ որ քրիստոնէական նկարագիրի ապացոյցներն են սուրբ կեանքն ու աստուածասիրութիւնը՝ մեզի եւ մեր ընկեր արարածներուն համար:
9. Կը հաւատամ որ բացի Աստուծմէ ոչ մէկ էակ պաշտելի ու երկրպագելի պէտք է ըլլայ, եւ թէ՛ Սուրբ Երրորդութեան երեք Անձնաւորութիւնները արժանի են մեր պաշտամունքին, որը եթէ ընդունելի պիտի ըլլայ՝ պէտք է մատուցուի ուրիշ ոչ մէկու անունով՝ բայց միայն Քրիստոս Յիսուսի:
10. Կը հաւատամ մեռելներու յարութեան, ինչպէս նաեւ դատաստանի օրուան, եւ թէ՛ արդարին երջանկութիւնը ու չարին պատիժը կը սկսի մահով, ու կը շարունակուի յաւիտեան:

11. Կը հաւատամ որ նշմարիտ քրիստոնեաներ, ինչ ալ ըլլայ անոնց թիւը, կը կազմեն Քրիստոսի Եկեղեցին երբ օրինաւորապէս կացմակերպուած են: Եկեղեցիին Գլուխը Քրիստոս է, ու Խորհուրդները՝ Մկրտութիւն եւ Հաղորդութիւն:
12. Կը հաւատամ որ Քրիստոս հաստատեց աւետարանի բարոգութիւնը մարդոց փրկութեան եւ իր ժողովուրդին դաստիարակութեան համար: Քրիստոսի Եկեղեցիին պարտականութիւնն է մինչեւ վերջը կատարել իր հետեւեալ պատուէրը – «Գացէ՛ք ամբողջ աշխարհը, ու բարոգեցէ՛ք աւետարանը ամէնուն: